ներին։ Տեսնելով, որ սպասվող օժանդակ հայկական ուժերը ուշանում են, Մխիթարը առաջարկում է խանին միացյալ ուժերով գնալ և փակել դեպի Օրդուբադ տանող Ուզունբանդի կիրճը։ Սակայն այստեղ խանը լքում է Մխիթարին ու հեռանում, չցանկանալով մասնակցել հետագա գործողություններին։ Հայ զինվորները միայնակ կտրում են կիրճը, օսմանցիք հարկադրված փորձում են անցնել Արաքսի մյուս ափը, որի ընթացքում շատերը խեղդամահ են լինում, իսկ մնացյալները մահ են գտնում հայ զինվորների ձեռքով[24]։

Ուշագրավ են Տեր-Ավետիսի տեղեկությունները Մեղրիում օսմանցիների տված զոհերի, նրանցից ձեռք բերված հարուստ ավարի և հատկապես հարկահանի (դեֆթերդար) բեռների մեջ հայտնաբերված ու ոչնչացված 32000 հարկային թղթերի մասին։ Այլ առիթով նշել ենք, որ Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի արևելյան բաժնի արխիվում, Նախջևանի, Օրդուբադի, Ագուլիսի փաստաթղթերի կողքին բացակայում են Մեղրիին վերաբերող փաստաթղթերը, որը դալիս է հաստատելու Տեր-Ավետիսի պատմածների ճշմարտացիությունը[25]։ Սպանված հարկահանի բեռներում եղած 32000 հարկաթղթերը հայերից գանձվող ջիզյայի թերթիկներն են (էվրագ-ի ջիզյա), որ նախապես գրվում և բաժանվում էին չափահաս հայ տղամարդկանց և ապա ըստ կարողության՝ ստորին, միջին և վերին չափերով, տարվա ընթացքում գանձվում էր հատուկ պաշտոնյաների՝ ջիզյադարների միջոցով։ Դա նշանակում է, որ հարկային պաշտոնյաների նախնական հաշվումներով, այդ շրջանում գրված թերթիկների քանակությամբ չափահաս հայ տղամարդիկ կային։

Այս դեպքերին հաջորդում են օսմանյան զորքերի և հրամանատար փաշայի չախչախումը Բեխ գյուղում, Բարգուշատից շարժվող զորքերի ոչնչացումը Օքյուզյարաթ լեռան մոտ և այլ օսմանյան ուժերի պարտությունը Մանլև գյուղի ուղղությամբ, որից հետո ամբողջ Ղափանի տարածքը մաքրվեց օսմանցիներից։

Նկարագրելով այս բոլորը, Տեր-Ավետիսը այնուհետև պատմում է Դավիթ-բեկի կողմից՝ սպանված օսմանցիների գլուխները շահ Թահմասպին ուղարկելու և Թահմասպից դրվատական խոսք և արտոնությունների շնորհման վերաբերյալ հրահանգներ պարունակող հրովարտակ ստանալու մասին։

«Արդ իբրև ետես Դաւիթ պէկն,—կարդում ենք Տեր-Ավետիսի թելադրած հատվածում,—յամենայն ուրեք զթշնամիսն իւր առաջի իւր վանեալս, առաքեաց շահ Թահմազին երկուս բեռինս գլխովք սպանեցելոց։ Իսկ նա ևս առաքեաց սմա մի նժոյգ ձի, մի խաչալամ և իւրաքանչիւր զօրապետացն մի մի վերարկու, և զիշխանութիւն հատանելոյ զդրամ։ Գրեաց նաև զհրովարտակ և ասէ. Որքան խանք գոն ի կողմանսդ յայդոսիկ՝ գլխաւորն լիցի Դաւիթ պէկն, և գնացեալ ի բաց հանցէ զօսմանցին յերկրէն իւրմէ»[26]։

Սույն հատվածը համապատասխան բնագրում վերաշարադրելիս Ղ. Ստեփանոսյանը կրկնապատկել է ուղարկված գլուխների քանակը՝ դարձնելով չորս բեռ և ապա ավելացրել, որ ի տես այդ «ավարի», շահը «ուրախ լինէր յոյժ ի վերայ քաջութեանցն Դաւթի և զօրավարաց նորա, զընծայս պարգևէր, հրովարտակս գրէր առ նա՝ ըստ բանիցս ըստ այսոցիկ»[27]։ Այնուհետև փորձ է արված Տեր-Ավետիսի բանավոր նկարագրության հիման վրա տալ հրովարտակի շարադրանքը, որն, ի դեպ, իր ձևով և ոճով բավական նման է այդ շրջանից մեզ հասած նմանատիպ հրովարտակներին.

«Շահ Թամազ արքայ Պարսից՝ առ քաջդ Դաւիթ պէկ, և առ քաջ զօրավարսդ Հայոց՝ որք ընդ քեզ են, ողջոյն։

---

24 Պատմութիւն Ղափանցւոց, էջ 138։

25 Հ. Դ. Փափազյան. Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի օսմանյան դիվանական վավերագրերը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 3, էջ 197։

26 Պատմութիւն Ղափանցւոց, էջ 139։

27 Նույն տեղում, էջ 173։